ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «25» մայիսի 2018թ
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԿ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ -ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել են Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.

Ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշեց, որ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունները՝ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը և ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և
Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին,
2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Էդգար Մելքոնյան

Անդամներ՝ ..... Գրիգոր Գաբրիելյան

..... Էդգար Տոնանանյան

..... Խորեն Պետրոսյան

..... Արթուր Թամրազյան

Քարտուղար՝ ..... Օֆելյա Ասատրյան